**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովաշեն
համայնք, հեռ. (094)21-71-08, (094)21-71-05, էլ. փոստ
zovashen.kotayq@mta.gov.am

N 46
*20 մայիս 2017թ.*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԱՊԵՏ ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի պահանջների կից ներկայացվում է Զովաշեն համայնքի ղեկավարի 2017 թվականի հունվարի մեկից մինչև այսօր կայացրած որոշումները:

Առդիր 6 թերթ:

**Համայնքի ղեկավար՝** **ՍԵԴՐԱԿ ՍԱՖԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Զովաշեն, հեռ. (094)21-71-08, (094)21-71-05, էլ. փոստ zovashen.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 1-Ա

ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒԿ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ին կայանալիք հերթական ընտրություններին համայնքի տարածքում քարոզչական պաստառներ փակցնելու համար առանձնացնել հետևյալ անվճար տեղը՝
1) գ.Զովաշեն 2-րդ փողոց, 1-ին փակուղի, թիվ 1 հասցեին հարող հատվածում:

2.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Քաջիկ Գասպարյանի վրա:

Համայնքի ղեկավար՝ ՍԵԴՐԱԿ ՍԱՖԱՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Զովաշեն, հեռ. (094)21-71-08, (094)21-71-05, էլ. փոստ zovashen.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 2-Ա

## ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ին կայանալիք հերթական ընտրությունների անկացման համար Զովաշեն համայնքում սահմանել հետևյալ տեղամասային կենտրոնը.
1)Կոտայքի մարզի Զովաշեն գյուղական համայնքի հիմնական դպրոցի շենք՝ 2-րդ փողոց թիվ 11/1 հասցե:

2. Հանձնարարել աշխատակազմի քարտուղար Վահե Սաֆարյանին, գործող կարգի համաձայն տեղամասային կենտրոնների գտնվելու վայրի մասին իրազեկել լիազոր մարմնին, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին:

**Համայնքի ղեկավար՝** **ՍԵԴՐԱԿ ՍԱՖԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Զովաշեն, հեռ. (094)21-71-08, (094)21-71-05, էլ. փոստ zovashen.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՄԱՐՏԻ 2017թվականի N 3-Ա

### ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ,ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2017 թվականի փետրվարի 27-ի N 31-Ա որոշման 2-րդ կետի , Զովաշեն համայնքում 2017 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների,հեղեղումների ,սելավների և սողանքների կանխարգելման ,հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների կազմակերպման նպատակով `որոշում եմ `

Կոտայքի մարզի Զովաշեն համայնքի տարածքում 2017 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների , սելավների , քարաթափումների և սողանքների կանխարգելման հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների կազմակերպման նպատակով.

1. Հաստատել Զովաշեն համայնքի տարածքում 2017 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների , սելավների , քարաթափումների և սողանքների կանխարգելման հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը ՝ համաձայն N1 հավելվածի:
2.Մինչև 2017 թվականի մարտի 18-ը Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչություն ներկայացնել՝
1) համապատասխան միջոցառումների պլան,
2)տեղեկություններ Զովաշեն համայնքի հակահեղեղային կառույցների հաշվառման վերաբերյալ՝ համաձայն N 2 հավելվածի,
3.առաջարկություններ Զովաշեն համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ նախատեսվող միջոցառումների վերաբերյալ ՝ համաձայն N 3 հավելվածի:
3)Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Զովաշեն համայնքի ղեկավարի տեղակալ Քաջիկ Գասպարյանի վրա :
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Համայնքի ղեկավար՝ ՍԵԴՐԱԿ ՍԱՖԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի
N 3 - Ա ՈՐՈՇՄԱՆ

# ՊԼԱՆ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ, ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| Հ/հ | Միջոցառումների անվանումը | Կատարող | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| | *1. Կանխարգելիչ միջոցառումներ* | | |
| 1 | Ուսումնասիրել սելավատարների վիճակը և արդյունքները ներկայացնել Կոտայքի մարզային փրկարարական վարչություն | Համայնքի ղեկավարի տեղակալ | Մինչև 18.03.2017թ. |
| 2. | Նախապատրաստել համապատասխան տեխնիկա սելավատարների անհրաժեշտ հատվածները մաքրելու, վտանգավոր տեղամասերում ափապաշտպան կառույցները ամրացնելու համար : | | Մինչև 18.03.2017թ. |
| 3. | Մաքրել համայնքի սելավատարները: Վտանգավոր տեղամասերում ամրացնել ափապաշտպան կառույցները: | | Մշտական |
| 4. | Բնակչության հետ կատարել բացատրական աշխատանքներ՝ ջրածածկման, հեղեղավտանգ , սելավավտանգ և սողանքավտանգ գոտիներում դաշտային աշխատանքները կարգավորելու համար | | |
| 5. | Պատրաստ վիճակի բերել համայնքային կազմավորումները և արագ արձագանքման փրկարար խմբերը, դրանք հագեցնել համապատասխան անձնակազմով, տեխնիկայով և սարքավորումներով : | Կազմավորումների փրկարարական ջոկատի հրամանատար | Մինչև 18.03.2017թ. |
| | *2. Հիմնական միջոցառումներ* | | |
| 6. | Իրազեկել վտանգավոր տարածքներում գտնվող բնակչությանը՝ իրենց սպառնացող վտանգների, նկուղային հարկերից իրենց ունեցվածքի տեղափոխման անհրաժեշտության , ինչպես նաև նման դեպքերում բնակչության վարվելակերպի կանոնների մասին: | Համայնքի ղեկավարի տեղակալ | Մշտապես |
| 7. | Հնարավոր վտանգավոր վայրերում կազմակերպել հսկողություն՝ արագ արձագանքելու և համապատասխան միջոցներ ձեռք առնելու համար : | Համայնքի ղեկավար | Անհրաժեշտության դեպքում |
| 8. | Անհրաժեշտության դեպքում կազմակերպել և իրականացնել վտանգավոր տարածքներից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխումը և տեղաբաշխումը: | Տարահանման հանձնաժողովի նախագահ, համայնքի ղեկավարի տեղակալ | Անհրաժեշտության դեպքում |
| 9. | Տուժած շրջաններում կազմակերպել և իրականացնել փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ: | Համայնքի ղեկավար | Ըստ Աիրաժեշտության |
| 10. | Ներգրավել աշխատունակ քաղաքացիներին (իրենց համաձայնությամբ), ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների պատճառած հետևանքների վերացման գործընթացին՝ ըստ մասնագիտական և անձնական հնարավորությունների : | Համայնքի ղեկավար | Անհրաժեշտության դեպքում |

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի
N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ

# Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Կոտայքի մարզի Զովաշեն համայնքի հակահեղեղային կառույցների / կառույցի/ հաշվառման

| Հ/հ | Կառույցի Տեղադրությունը / բնակավայր, գետավազան, վտակ/ | Կառույցի Տիպը / հեղեղատար, հեղեղակարգավորիչ, թմբոտ/ | Կառույցի | | | | Կառույցի տեղանքի սեյսմիկության աստիճանը / բալ/ | Մոտակա բնակավայրերի և կառուցվածքների անվանումը, որոնք կարող են տուժել Կառույցի անբավարար աշխատանքի հետևանքով | Կառույցի տեխնիկական վիճակը / բավարար , անբավարար/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | երկարությունը /մ/ | լայնությունը /մ/ | խորությունը /մ/ | Կողեզրերի Թեքությունը /0/ | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Հատիսի հեղեղատար | Բնական | 1400 | 5 | 10 | 45 | - | Գ.Զովաշեն | Բավարար |
| 2 | սելավատար 1-ին փողոցի երկարությամբ | Բնական | 1500 | 5 | 0.5 | 10 | - | Գ.Զովաշեն | Բավարար |

Զովաշեն համայնքի ղեկավար Ա. Սաֆարյան

Կ.Տ

ՀԱՎԵԼՎԱԾ 3
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԶՈՎԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի
N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ

## Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Կոտայքի մարզի Զովաշեն համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ միջոցառումների վերաբերյալ

| | |
|---|---|
| 1. Վտանգի / աղետի/ անվանումը/ ները/<br>• Սելավ<br>• Հեղեղում<br>• Սողանք<br>• Քարաթափում<br>• և այլն | • Սելավ<br>• Հեղեղում |
| 2. Վտանգավոր տեղամասի գտնվելու վայրը /երը/ | • Գյուղամերձ տարածքում<br>• անմիջապես I-ին փողոցի հարևանությամբ |
| 3. Առաջացման հնարավոր պատճառները | • Հորդառատ անձրևներ, ձնհալի հետ միաժամանակ<br>• Ջերմաստիճանի կտրուկ բարձրացում |
| 4. Վտանգավոր տեղամասերի նկարագրությունը: Վտանգավոր գոտում գտնվող շենքերի, շինությունների և բնակչության թիվը | • Ժամանակի ընթացքում սելավների բերած տիղմի նստվածքի առկայություն<br>• Բնակավայր 9 տուն , 42 մարդ |
| 5. Կանխարգելիչ միջոցառումների առաջարկությունները իրականացնելու համար | • Սելավատարի հունի մաքրում |
| 6. Համայնքների բյուջեներում կամ այլ ծրագրերով 2017 թ.-ին Պլանավորված, հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների համար ծախսերի չափը ըստ միջոցառումների տեսակների | • 2017 թվականի համայնքի բյուջեում պլանավորված չէ |

ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՖԱՐՅԱՆ

Կ. Տ